մեզանում ոչ թէ փոփոխութիւններ և բարենորոգումներ էին պահանջում «ազգի ներկայացուցիչները» այլ «ընդհանրապէս կրօնականութեան դէմ էին, որ այնպէս խորը նստել է ժողովրդի հոգու և սրտի մէջ»։ (Ա. Ահարոն. ճառը այս առթիւ)։

«Товарищъ»

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկ ընկերութիւններ. Գերմանական կաթոլիկների Ամերիկայի ընկերութիւնը 1906 թ՝ 72,259 մարկ է ստացել։ Գերմանիայի գերիշխանութեան տակ գտնուած երկրներում միսսիոնարական ընկերութիւնների արած ծախքը, բացի յատուկ նպատակներով արուած նուէրներից՝ հասնում է 66,125 մարկի։

Գերմանական գաղութներում գործող 12 միսսիոնարական ընկերութիւնները 163 գլխաւոր և բազմաթիւ երկրորդական կայարաններ ունեն։ Այդ տեղերում 538 միսսիոնարներ են գործում (քահանաներ և եղբայրներ) 216 դպրութեան քոյրեր, ընդամենը 754 եւրոպացի գործիչներ, և 1000-ից աւելի կրօնի դասատուներ կամ հրահանգիչներ՝ ընիկներից։

Գեոլնի Ալբերդ Մագնուսի ընկերութիւնը 1906 թ. 65 ճիւղ ունէր, 21161,75 մարկ եկամուտով։ 1906 թ. 90,000 մարկ գործածուած է ուսանողների օգնութեան համար։ Դոցանից 15-ը իրաւաբանութիւն էին սովորում, 2-ը քաղաքատնտեսութիւն, 85 լեզուաբանութիւն, 12-ը մաթեմատիկայ և բնագիտութիւն, 6-ը բժշկութիւն, 1-ը անասնաբուժութիւն, 3-ը մեքենայագիտութիւն, 1-ը գիւղատնտեսութիւն։

Կան դաւանաբանական բնաւորութիւն կրող ընկերութիւններ, որոնց նպատակն է աղախիններին վարժեցնել տնային տնտեսութեան մէջ։ Այդպիսի 4 ընկերութիւն կայ Բաւարիայում 1000 անդամներով։ Բադենում արդէն կամենում են մի մեծ միութիւն հիմնել։ Ապրիլից Մինխենում «Hans und Herd» վերնագրով մի երկշաբաթաթերթ է հրատարակւում յատուկ աղախինների ընկերութիւնների համար, որպէս նրանց բերան։ Կաթոլիկ պատանիների համար հիմնուած է մի ամսաթերթ «Die Wacht» անունով։

Պիոս Ժ. եւ կենդանիների պաշտպանութեան ձգտումը.— Անգլիական կաթոլիկութեան բերան Pablet թերթը հաղորդում է հետեւեալը, որ մենք առնում ենք Ch. b. Chr. W. թերթից։ Նորերս Պիոս Ժ. երկու գիրք սիրով նուէր ընդունեց ա) «Սուրբերը և կենդանիները», բ) «Եկեղեցին և կարեկցութիւն դէպի կենդանիները»։ Հասկանալի է, որ Պիոս Ժ. ժամանակ չունէր այդ գրքերի ընթերցանութեամբ զբաղուելու, բայց երբ տեղեկացաւ, որ այդ գրքերն ուղարկուած են Նէապոլի կենդանիների պաշտպան ընկերութիւնից և թէ գրուած են ցոյց տալու համար, թէ մեծ սուրբերից շատերն իրենց հեզութեամբ և բարութեամբ նշանաւոր են հանդիսացել և թէ եկեղեցու հոգին միշտ այս խնդրում զօրաւոր է եղել, ջերմ համակրութիւն յայտնեց և ուղարկեց իւր առաքելական օրհնութիւնը Մարքիզուհի Բամբուրին, որպէս եկեղեցու հաւատարիմ դստեր, որ «Եկեղեցին և կարեկցութիւն դէպի կենդանիները» գրքի հեղինակն է։ Պապը գրեց իւր ձեռքով իւր լուսանկարի վերայ մի օրհնութիւն նրանց համար, որոնք հոմիներին և Աստուծուց պարգեւած ծառաներին պաշտպան հանդիսանում անդիտութեան դէմ։ Դոքանով նա անուղղակի այս միտքն է յայտնում, թէ կաթոլիկ եկեղեցին Աստուծոյ հաճելի պարտաւորութիւն է համարում կենդանիներին չարչարելու դէմ մղուած կռիւը։ Այսպէս կաթոլիկ եկեղեցին կարողանում է հանգամանքներից տեղն ու տեղն օգտուել եկեղեցու հեղինակութիւնը բարձրացնելու և ժողովրդի համակրութիւնը գրաւելու համար։

Կաթոլիկ պրոպագանդայի կոնգրեգացիան հրատարակել է մի հաստատուն հատոր 1000 երեսից բաղկացած, որ վերաբերում է 1901—1906 տարիների միսիոնարական գործունէութեան։

Վիճակագրական տեղեկութիւնը ցոյց է տալիս, որ մեծ յաջողութիւն է ունեցել պապական եկեղեցին յիշեալ տարիներում։ 1901 թուին քարոզչական երկրներում կային, 25,852,206 կաթոլիկ։ Վերջին 5 տարիներում այդ թիւը աճել է 30,619,767-ի։ Առանձին յաջողութիւն է ունեցել Աֆրիկայում, ուր 1901-ին միայն 402,582 կաթոլիկ, իսկ այսօր այդ թիւը կրկնապատկուել է՝ 845,739։